ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ժամանակաշրջանում, ճիշտ գնահատելով համայնքի իրավիճակը, առավել ուշադրություն եմ դարձրել համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների, բյուջեի սեփական եկամուտների մուտքերի, հողօգտագործման, հասարակական կարգի պահպանության, գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներին: Համայնքի բյուջեի կազմումը ընդունելով որպես համայնքի զարգացման հիմք՝ լուրջ ուշադրություն եմ դարձրել եկամտային մուտքերի (գույքահարկ, հողի հարկ, հողի վարձավճար), տեղական տուրքերի հավաքագրման խնդիրների կատարման վրա: Ընդ որում ղեկավարվել եմ եկամտային մուտքերի եռամսյակային, կիսամյակային և տարեկան համամասնությունները պահպանելու սկզբունքով: Հիմք ընդունելով, որ բյուջեի մուտքերի հավաքագրումը կախված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումից՝ ուղերձով դիմել եմ ազգաբնակչությանը: Միաժամանակ կազմվել է համայնքի բնակիչների 2011թվականի հարկերի հավաքագրման և ապառքների գանձման ժամանակացույց: Հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ներքոհիշյալ թվային ցուցանիշները բնութագրում և փաստում են իմ և կոլեկտիվի համագործակցության աշխատանքի արդյունքները.

ընդամենը նախատեսվել է եկամուտներ՝ 49,926,100.00 հազ. դրամ,

փաստացի կատարվել է՝ 50,586,350.40 հազ. դրամ,

սեփական եկամուտների գծով կատարվել է նպատակասլաց աշխատանք հավաքագրվել է՝

հողի հարկ՝ 3,129,300.00 հազ. դրամ, կատարվել է՝ 3,597,950.00 հազ. դրամ,

գույքահարկ՝ 1,425,900.00 հազ. դրամ, կատարվել է 1,497,886.90 հազ. դրամ,

Տեղական տուրք՝ 540,000.00 հազ. դրամ, կատարվել է 595,500.00 հազ. դրամ,

Որպես ղեկավար, լինելով բյուջեի տնօրինման և վերահսկման պատասխանատուն, բյուջեի ծախսային մասը հաշվետու ժամանակաշրջանում նպատակաուղղել եմ հետևյալ խնդիրների լուծմանը.

ծախսային մաս ընդամենը՝ 55,803,027.00 հազ. դրամ

տրվել է աշխատողներին աշխատավարձեր և հավելավճար՝ 19,820,462.00 հազ.դրամ,

պարգևատրումներ և դրամական խրախուսումներ՝ 900,000.00 հազ. դրամ

սոցապ պետ. վճարներ՝ 3,990,000.00 հազ. դրամ:

Լուրջ ուշադրություն եմ դարձրել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններից կոմունալ ծառայության բնագավառի խնդիրների լուծմանը: Այդ նպատակով ծախսվել է 580,000.00 հազ. դրամ: Կանոնավորված ձևով բեռնատար ավտոմեքենայով յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում երկու օրով համայնքի տարածքում շարունակվում է սանմաքրման և աղբահեռացման աշխատանքներ: Աղբը տեղափոխվում է հատկացված աղբավայր, ընդ որում ժամանակ առ ժամանակ կուտակված աղբաշերտը ծածկվում է հողաշերտով:

Կատարվել է բնակավայրի բարեկարգման, ճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքներ: Տնտեսական հարաբերություններից հատկապես ուշադրություն եմ դարձրել անասնաբուժական ծառայությանը: Համայնքի անասնաբուժական ծառայությունից խստորեն պահանջելով կատարել հակահամաճարակային միջոցառումներ, նախապես կանխելով անասունների մոտ հիվանդությունների առաջացումը:

Իրականացվել է համայնքի բյուջեից սոցիալական պաշտպանվածության ծրագիր՝ 1,900,000.00 հազ. դրամի չափով, որը կազմում է

Վարչական բյուջեի պահուստային մասը կազմում է 6,751,144.00 հազ. դրամ:

Համայնքի բյուջեի կատարման սպասարկումը իրականացվել է սահմանված կարգով գանձապետարանի Վարդենիսի գանձապետական բաժանմունքի միջոցով, առանձին բյուջետային հաշվի համարով: համապատասխան ֆինանսական միջոցների հատկացումը կատարվել է համայնքի բյուջեի հաշվին առկա և բյուջեում նախատեսված միջոցների հաշվին:

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում, որպես պետության կողմից պատվիրակված լիազորություն, կատարվել է Ծովակ համայնքի ընտանիքների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմակերպվել է սոցիալական ծառայության գործունեություն: համայնքի սոցիալ-տնտեսապես անապահով, կարիքավոր 150 ընտանիքներ ընդգրկվել են ‘Փարոս’ համակարգ: Թվով 17 միայնակների համար կատարվել է համապատասխան հաշվառում և ընդգրկվել նույն ծառայություն: Օգտագործելով համապատասխան հնարավորությունները համայնքի բնակչության մոտ 40%-ը ‘կանայք’ ներգրավվել են գարնանային գյուղատնտեսական սեզոնային աշխատանքներում:

Որպես պարտադիր լիազորություն, հողօգտագործման բնագավառում իրականացրել եմ վերահսկման աշխատանքներ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման վերաբերյալ՝ հողօգտագործողներից պահանջելով պահպանել հողային օրենսդրության պահանջները:

Համայնքի հողային հիմնախնդիրները բազմիցս ներկայացրել եմ Մարզպետարանին, Կառավարությանը, ՀՀ Ազգային ժողովին, խնդրելով ընդառաջել և լուծել.

1. դեռևս 1992թվ. պետֆոնդից Ծովակ գյուղական համայնքի բնակիչներին որպես սեփականաշնորհում տրված հողատարածքների օրինականացման հարցը;

2. Ծովակ գյուղական համայնքի վարչական սահմաններին կից 'Սևան' ազգային պարկի տարածքից 25 և ավել տարիներ առաջ համայնքի բնակչության կողմից ինքնակամ ձեռք բերված և բնակելի տներ կառուցած (թվով 43) պետական գրանցում ստանալու հարցը:

Հասարակական կարգի պահպանությունը համայնքում լավ հիմքերի վրա է դրված: Իրավախախտումները հազվադեպ են ի շնորհիվ երիտասարդության շրջանում մշտապես տարվող դաստիարակչական և ռազմահայրենասիրական աշխատանքների: Մշտապես հոգ եմ տանում Արցախյան պատերազմի մասնակից, ազատամարտիկներ Արմեն Ղանդիլյանի և Վրույր Սարդարյանի ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Նրանց ընտանիքները ընդգրկվել են պետության կողմից բնակարանային խնդիրները առաջնահերթության կարգով հատկացվողների ցուցակներում:

Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների համար կազմակերպվել է հուշ երեկո նվիրված հաղթանակի օրվան, մասնակիցները պարգևատրվել են դրամական միջոցներով և նվերներով: Պաշտպանության բնագավառում, որպես կամավոր լիազորություն աջակցել եմ գարնանային և աշնանային զորակոչին: Քաղաքաշինության բնագավառում սահմանված կարգով վարել եմ քաղաքաշինական կադաստրը, հասցեավորման աշխատանքները, համայնքի տարածքում կանխարգելվել է և կասեցվել է ինքնակամ շինությունները:

Աստիճանաբար լուծվում են համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրները: Կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարվել՝ Հատկապես երիտասարդ ընտանիքներին հնարավորություն է ընձեռնվել օգտվելու երկնագույն վառելիքից:

Իմ անմիջական ղեկավարությամբ գյուղում գործում է Գյուղփոխօգնության Ծովակի միավորումը, որը դրամական կարճաժամկետ և երկարաժամկետ վարկեր է տրամադրում համայնքի բնակչությանը գյուղատնտեսական և անասնապահական աշխատանքներ կազմակերպելու նպատակով:

Համայնքի բյուջեի միջոցներով հիմնանորոգվել է մսուր մանկապարտեզի տիպային շենքի տանիքը: Ցավոք պետք է նշել, որ համայնքի բյուջեն հնարավորություն չի տալիս կարգավորելու շատ հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ.

Վերանորոգելու՝

1. համայնքի ջրագծի ներքին ցանցը,

2. մշակույթի տունը, առանձնապես տանիքը,

3. մսուր-մանկապարտեզի տիպային շենքի ներքին հարդարանքը հատակը, սանհանգույցը, միջնապատերը:

Բազմիցս դիմել եմ Մարզպետարան, վերադաս կազմակերպություններին, գործարարներին, հիմնադրամներին մեզ օգնելու նպատակով:

Համայնքը պատրաստակամ է շենքի վերանորոգման հարցում տրամադրել բանվորական ուժ, կատարել հնարավոր չափի ֆինանսական ներդրում, քանի որ մանկական այս հիմնարկի գործունեության կազմակերպումը համայնքի համար ռազմավարական նշանակություն ունի.

1. այն կապահովի նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության և հանգստի կազմակերպումը.

2. թվով մանկավարժ-դաստիարակներ և սպասարկման աշխատողներ կունենան աշխատատեղեր.

3. երիտասարդ ընտանիքները չեն լքի համայնքը և կկանխվի արտագաղթը.

4. այն կնպաստի ծնելիության աճին և համայնքի ազգաբնակչության թվաքանակի ավելացմանը:

Գյուղատնտեսության բնագավառում լուրջ աշխատանք է կատարվել գարնանային գյուղատնտեսական աշխատանքների ուղղությամբ, կապված ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի ընթացքում Ծովակ համայնքին տրամադրվել է որակյալ 7 400 կգ առաջին վերարտադրության 'Տանյա' ցորենի սերմնացու, որը բաշխվել է համայնքի բնակիչներին ցանքսեր կատարելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրել եմ ծովակ գյուղական համայնքի ավագանու (թվով 10) հերթական և արտահերթ նիստեր, որոնց ընթացքում սահմանվել է ղեկավարի աշխատակազմի և գյուղապետարանի աշխատակիցների հաստիքացուցակը, դրույքաչափերը, սահմանվել է անշարժ գույքի հասցեավորումը, 2011թ. առաջին եռամսյակի և առաջին կիսամյակի ընթացքում բյուջետային մուտքերը և ծախսային մասը: Քննարկվել և հաստատվել է տեղական տուքերի և վարձավճարների դրույքաչափերը: Համայնքի ղեկավարի աշխատակազմը մասնակցել է ՀՀՀԱ կողմից կազմակերպված ՀԾ 2-րդ վերապատրաստմանը: Աշխատակազմի քարտուղարը և գլխավոր մասնագետը ատեստացիայի արդյունքներով վերահաստատվել են համապատասխան պաշտոններում:

Որպես համայնքի ղեկավար կայացրել եմ որոշումներ՝ /54/ բազմաթիվ կարևոր խնդիրների վերաբերյալ.

1. Ծովակ գյուղական համայնքի ֆինանսական բյուջեի կատարման համամասնությունների և կուտակված ապառքների մասին.

2. 2011թ. Ծովակ գյուղական համայնքի գյուղապետարանի գնումների հանձնաժողով ստեղծելու մասին.

3. հաստատվել է Ծովակ գյուղական համայնքի ՀԾ մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը.

4. Համայնքին պատկանող սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

5. Աշխատակազմի քարտուղարին և գլխավոր մասնագետին իրենց պաշտոններում ատեստացյոն հանձնաժողովի արդյունքներով վերահաստատելու մասին

6. Բազմաթիվ այլ նորմատիվ և անհատական որոշումներ, որոնք բխում են Ծովակ համայնքի սոցիալ-տնտեսական սան մաքրման բարեկարգման աղբահանության աշխատանքների կազմակերպման մասին ինչպես նաև անասնաբուժական ծառայության խնդիրների հետ:

Սոցիալ տնտեսական խնդիրներից առանձնապես կարևորվել է համայնքի բնակչության համար խիստ անհրաժեշտ 2500մ. երկարությամբ 3-րդ կարգի ոռոգման համակարգի (Ծովակի 2-րդ ջրագիծ) ջրատարի կառուցումը, որին Ծովակ համայնքի 2011թ. բյուջեից կատարվել է 3 709 482 հազար դրամ ներդրում:

Աշխատակազմի քարտուղարից մշտապես պահանջել եմ ժամանակին պատշաճ կերպով վարել գյուղապետարանի գրասենյակային գործունեությունը, ներկայացնել պահանջվող տեղեկատվություններ, նախապատրաստել և կազմակերպել համայնքի բնակիչների ընդունելություններ, ապահովվել ավագանու նիստերի նախապատրաստումը և արձանագրումը ինչպես նաև ավագանու կողմից արձանագրությունների վավերացումը:

2011թ-ի ընթացքում մի շարք բարդ խնդիրներ իրագործելու նպատակով առաջին հերթին անհրաժեշտ էր առավել բարձրացնել համայնքի կառավարման արդյունավետությունը, ապահովելով կատարվելիք աշխատանքների հրապարակայնությունը և բյուջեի թափանցիկությունը: Առաջնահերթ խնդիր էր համայնքում բերքահավաքի ճիշտ կազմակերպումը, որի արդյունքներից էր կախված բնակչության վճարաունակ դառնալու հնարավորությունը:

Մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման ծախսերը 17,061,144.00 դրամ ծախսվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության հոդվածից 205051: